

# ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ԹՈՔԱԽԾԲ ՈՐՊէՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ 1)

IV

Ի՞նչ է նշանակում թոքախսա հիւանդութեան յատուկ կան-  
խատրամադրութիւնը: Գիտութիւնը առայժմ կարող չէ իր վրձ-  
ռական պատասխանը տալ այդ հարցի մասին. բայց և այնպէս  
մենք կաշխատենք կարելոյն չափ պարզել այդ խնդիրը:

Թոքախսի յատուկ կանխատրամադրութիւնը կարող է լի-  
նել անդամակին և ընդհանուղ, այսինքն՝ թոքերի և կամ թէ  
մարդուս ամրող կազմուածքի մէջ: Առողջ և չը մնասուած  
թոքերը թոքախսի մանրէների համար մի տեսակ անմերժենալի  
ամրոցներ են ներկայացնում: Նախ և առաջ թոքի ներքին մա-  
կերևոյթը, այսինքն այն լորձանիւթ թաղանթը, որ ծածկում  
է թոքի անթիւ և անհամար խողովակներն ու բշտիկները, բադ-  
կացած են մի շարք անծուկ կերպով կապուած ցանցերից. այդ  
ցանցերը թոքերի համար պաշտպանողական նոյնպիսի դեր են  
կատարում, ինչպէս օրինակ պատր` ամրոցի համար: Դորանք թո-  
քի հիւսուածքը պաշտպանում են զանազան մանրէնիներից, ո-  
րոց թւում և տուքերկուկեօվի մանրէից և պաշտպանում ոչ  
միայն մեքենական կերպով, ոչ միայն նրանով, որ ծածկում են  
նրա ներքին հիւսուածքները, այլ և քիմիապէս` արտադրելով  
մանրէնիներին ֆլասսակար նիւթ: Եթէ ծածկոյթի մի մասը  
մնասում է, այն դէպքում թոքի այդ մասը մնում է առանց  
պաշտպանի. իսկ դա թոքի համար նոյնպիսի վճռական նշանա-  
կութիւն ունի, ինչպէս և ամրոցի համար նեղքք:

Բայցի այդ կայ և մի ուրիշ հանգամանք, որ նոյնպէս մեծ  
դեր է կատարում թոքախսին յատուկ կանխատրամադրութեան  
մէջ: Դա թոքի միջի արեան շրջանառութեան կանոնաւորութիւնն

է։ Թոքը, ինչպէս և ամեն մի հիւսուածք, թարմ արեսն ան-ընդհատ մատակարարութիւն է պահանջում։ Եթէ թոքի մի մասում ինչևէ պատճառներից խախտում է կանոնաւոր արեան-շրջանառութիւնը և նա թարմ արին աւելի քիչ է ստանում քան իրան անհրաժեշտ է, այն ժամանակ թոքի այդ մասը կորցնում է վնասակար ազգեցութեանդ դիմադրելու ընդունակութիւնը։

Այսպէս ուրեմն մենք մատնանիշ արինք երկու դէսք, ո-րոնք բացատրում են մեզ թէ ինչումն է կայանում թոքախափ տեղային կանխատրամադրութիւնը։ Պարզենք այժմ ընդհանուր կանխատրամադրութիւնը։

Սկսում առաջին տեղը բռնում է արեան բնական դրութիւնը մարդու կազմուածքի մէջ։

Սրիւնը, ինչպէս արդէն լսյանի է, բաղկացած է հեղուկից և կարմիր ու սպիտակ գնդիկներից։ Զանազան վնասակար ման-րէներից վարակուելու դէմ դիմաւոր պաշտպանողական (ընդ-դիմադրական) գերը պատկանում է վերօնիշեալ սպիտակ զբն-դիկներին և արեան հեղուկին։ Սպիտակ գնդիկները մի տեսակ լատկութիւն ունին, մարմնի մէջ եղած ամեն վնասակուր բա-ները քաշում են դէպի իրանց և ոչնչացնում։ Մարդու կազ-մուածքի մէջ մտնող ամեն մի մանրէն ամենից առաջ պէտք է կարողանայ դիմադրել սպիտակ գնդիկների հետ մղած լամառ կոռուին։ և աւելի շատ այդ կուում լաղթող է հանդիսանում կազմուածքի պաշտպանը, քան նրա թշնամին։

Հասկանալի է ուրեմն, թէ ինչ գեր է խաղում արիւնը թո-քախտի կանխատրամադրութեան հարցում։ Եթէ որևէ պատ-ճառից արեան սպիտակ գնդիկների թիւը պակասում է, կամ վոխտում արեան շինուկի բաղադրութիւնը, նրա պաշտպանո-ղական լատկութիւնը թուշանում է։

Պէտք է ի նկատի ունենալ, որ միայն արիւնը չէ որ ազ-գեցութիւն ունի թոքախտի կանխատրամադրութեան վրայ։ Մարդուս կազմուածքի մէջ իրար հետ անձուկ կերպով կապուած գործողութիւնները այնքան շատ են, որ իսկապէս ասած բոլոր ընախօսական գործողութիւնները կարող են կապ ունենալ այս կամ այն հիւանդութեան կանխատրամադրութեան հետ։

## V

Այս բոլորից ընթերցողը կարող է երևակայել, թէ ինչ է թոքախտի կանխատրամադրութիւնը և ինչից կախումն ունի նա: Այժմ դժուար չի լինի եղրակացնել, թէ ինչպէս են աղդում սօցիալական այս կամ այն պայմաններն այդ կանխատրամադրութեան վրայ:

Այն բոլոր արհեստները, որոնք կապ ունեն թուղ ներշնչելու հետ, զօրեղացնում են թոքախտի կանխատրամադրութիւնը. որովհետև թողը ոչնչացնում է և քայքայում թորի պահապահական փառը և այդպիսով ճանապարհ բացում թոքախտի մանրէների համար: Միւս կողմից, անդո՞ւատ թող ներշնչելը թոքի լորձանիւթի թաղանթի բորբոքում է առաջացնում, որ կոչւում է թոքափողատապ (ծրոհչիտե):

Թողի զանազան տեսակները թոքի լորձանիւթի թաղանթի վրայ ասարելը աղջեցութիւն են ունենում. ամենամնասակարը մետաղի թողն է: Բուսական թողը համեմատաբար աւելի պահաս վնասակար է, բացի մի քանի բացառութիւններից, օրինակ ծխախոտի թողը, որի մասին մենք արդէն խօսել ենք:

Բացի թողից կան և ուրիշ վնասակար գործողութիւններ, որոնք թուլացնում են թողերը:

Եթէ հետազոտելու լինիք ստորին դասակարգի մարդու կեանքը նրա ծնուելու օրից մինչև մահը, կը տեսնենք որ կան մի շարք անբարեխաջող պայմաններ, որոնց հետևանքը լինում է կաղմուածքի թուլանալը, արեան շինուկի բնական բարդարութեան փոխուելը և սպիտակ գնդիկների պաշտպանողական ոյժի թուլանալը: Չքաւոր դասակարգի զաւակը մեծ մասամբ աշխարհ է գալիս արդէն քայքայուած առողջութեամբ, ժառանգելով ծնողների թոյլ կաղմուածքը: Առաջին տարին ո՛չ թէ չէ ամրացնում բանուորի երեխանների կաղմուածքը, այլ ընդհակառակը աւելի է քալքալում նրանց և մահացնում. իսկ այն որ չէ մեռնում, լինում է արիւնպահաս, շրջրկոտ (ՅՈԼՈԴԿԱՆ), որ ապրելով կեղասոտ և մութ բնակարաններում զանազան վարակիչ հիւանդութիւնների տարածման ամենալաւ գործիք է դառնում:

## VI

Վերջին ժամանակներս զիտութիւնը, ընդունելով թոքախտի սօցիալական լատկանիշը, փոխեց և իր կարծիքը այդ չարիթեածի դէմ կոռուկի միջոցի վերաբերմամբ:

Նոոխին ժամանակները զիտնականների ամբողջ ոյժը ուղղուած էր միայն թոքախտի գեղ գտնելու համար: Բայց բոլոր փորձերը միշտ անդաշող էին լինում: մինչև 1854 թուին Բրեները չը բացաւ իր առաջին բուժարանը: Նրան լազողուեց դանել թոքախտի հիւանդութեան զիմաւոր սօցիալական պատճառը և նա վճռեց հիւանդին՝ տալ այնպիսի լարմարութիւններ, որոնց բացակայութիւնը հիւանդութեան զիմաւոր պատճառն է եղեւ: Նրա բուժման ամբողջ խնդիրը կախանում է նրանում, որ հիւանդին արւում է հանգստութիւն, օդ և լաւ սնունդ:

Բրեների միջոցը ներգործական է երբ հիւանդութիւնը գեռես թարմ է և չէ տարածուած: Այդ պատճառով զիանականները անընդհատ աշխատում էին աւելի պարզ և նիշտ միջոց դանելու: Բայց մինչև այժմ, բացի Բրեների մետոդից ոչ մի նոր միջոց չունենք թոքախտի դէմ:

Սակայն մեր հայեացքները զգալի կերպով զարգացել են Բրեների մետոդի վերաբերմամբ: այժմ մենք չը պէտք է բաւականանք միայն խորհուրդ տալով հիւանդին որոշ ժամանակով բուժարան մտնել, այլ պէտք է աշխատենք, որ Բրեների միջոցը չբաւրո դասակարգին մատչելի դարձնենք: Ահա հենց այդ պատճառով է որ բուժարան բանալու հարցը սօցիալական կերպարանք է ընդունել:

Ժողովրդական բուժարանների բացումը անհրաժեշտ է համարւում ամեն տեղ, բայց միայն Դերմանիարումն է ուղիղ հողի վրայ դրած:

Բայց անխտիր ամեն դասակարգի հիւանդներին մատչելի դարձրած բուժարաններն էլ մեղ չեն գոհացնիլ, որովհետեւ նաչէ համապատասխանում մեր ներկալիս թոքախտի սօցիալական լատկութեանը վերաբերեալ հայեացքներին:

Մարդիկ իրանց շանքը պէտք է դարձնեն ոչ թէ թոքախտը բուժելու, այլ նրա առաջը առնելու վրայ: Մարդու կաղ-

մուածքը պէտք է բժշկել ոչ թէ այն ժամանակ, երբ նո արդէն տուբերկուլիօզի մանրէի զոհ է դարձել, ալլ աւելի առաջ. պէտք է կռուել ոչ թէ իրա թոքախտի հետ, ալլ նրա յատուկ կանխատրամադրութեան հետ, որ մեծ ժաւալով տարածուած է չքաւոր դասակարդի մէջ։ Այն, ինչ որ տրուում է հիւանդներին բուժարաններում, պէտք է տալ նրանց մինչև հիւանդանալլր։ Մենք արդէն զիտենք, որ թոքախտի բուժման ամենազլիսաւոր դեղերն են՝ օղը, հանդստութիւնը և լաւ սնունդը. ուրեմն պէտք է այնպիսի պարմաններ ստեղծել ժողովրդի համար, որ նրանք չը նեղուեն վատ օղից, անհանգիստ կեանքից և վատ սնունդից։

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ